ՌԱՀՀԿ ԱՄՍԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

4
Ապրիլ 2010



Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

Լույս տեսավ ՌԱՀՀԿ լրատուի չորրորդ համարը

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) հունվարին մեկնարկ տվեց նոր ամսական լրատուների շարքի: Այժմ հրապարակի վրա է ՌԱՀՀԿ լրատուի հերթական համարը, որը համառոտակի ներկայացնում է 2010թ. ապրիլին մեր իրականացրած գործունեությունը եւ ծրագրերը:

ՌԱՀՀԿ-ի գործունեությունը եւ ծրագրերը

Կենտրոնի անձնակազմը ելույթ ունեցավ տարածաշրջանային անվտանգությանը նվիրված խորհրդաժողովում

Ապրիլի 16-17-ը ՌԱՀՀԿ ավագ փորձագետ Մանվել Սարգսյանը եւ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը մասնակցեցին ու ելույթներով հանդես եկան «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի հովանավորությամբ կազմակերպված խորհրդաժողովում: «Հարավային Կովկասի նոր մարտահրավերները. ժողովրդավարություն եւ տարածաշրջանային անվտանգություն» թեմայով խորհրդաժողովին, որն անցկացվեց Ծաղկաձորում, մասնակցեցին նաեւ ներկայացուցիչներ Ադրբեջանից, Վրաստանից, Ռուսաստանից, Թուրքիայից, ինչպեսեւ Աբխազիայից, Հարավային Օսիայից ու Ղարաբաղից: Նույն օրերին ՌԱՀՀԿ փորձագետ Արմինե Ղազարյանը մասնակցեց ծաղկաձորյան մեկ այլ սեմինարի, որը կազմակերպել էր Երեւանի քաղաքագիտության դպրոցը:

ՌԱՀՀԿ-ը հյուրընկալեց Birthright Armenia ծրագրի կամավորներին

Ապրիլի 26-ին Կենտրոնի անձնակազմը հյուրընկալեց մի խումբ սփյուռքահայերի, ովքեր Հայաստանում աշխատում են Birthright Armenia ծրագրի շրջանակներում: Հանդիպման ընթացքում ՌԱՀՀԿ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը հյուրերին տեղեկություններ հաղորդեց Հայաստանի վարած ներքին եւ արտաքին քաղաքականության մասին: Վերոնշյալ ծրագրի՝ Կենտրոնում հյուրընկալված մասնակիցները Արգենտինայից եւ ԱՄՆ-ից ժամանած կամավորներ էին:

ՌԱՀՀԿ անձնակազմը ճեպազրույցներ ունեցավ դեսպանների հետ

Ապրիլի 28-ին ՌԱՀՀԿ ավագ փորձագետ Մանվել Սարգսյանը մասնակցեց ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորության դեսպան Չարլզ Լոնդեյլի հետ քննարկմանը՝ ներկայացնելով Հայաստանի ներքաղաքական եւ տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ իր վերլուծությունը: Նույն օրը ՌԱՀՀԿ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը տարածաշրջանային զարգացումների շուրջ ճեպազրույց տվեց ՀՀ-ում Էստոնիայի դեսպան Թոմաս Լուկին:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

ՌԱՀՀԿ-ն անցկացրեց քննարկում՝ նվիրված Ղրղզստանում վերջերս տեղի ունեցած խռովություններին

Ապրիլի 29-ին Կենտրոնն անցկացրեց կլոր սեղանի շուրջ քննարկում՝ նվիրված Ղրղզստանի վերջին խռովություններին եւ Հայաստանում դրանց կրկնության հնարավորությանը: Քննարկման ընթացքում զեկույցով հանդես եկան ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ռազմաքաղաքական հարցերով պատասխանատու Գժեգոշ Միխալսին, ՌԱՀՀԿ անձնակազմից Կարապետ Կալենչյանը, Մանվել Սարգսյանը եւ Ռիչարդ Կիրակոսյանը:

Զեկույցներում մասնավորապես ընդգծվեց, որ ղրղզական կառավարության տապալման պատճառ դարձան տնտեսական ճգնաժամի հետեւանքով հետզհետե սաստկացող ճնշումները, իշխանությունների՝ փոփոխություններ իրականացնելու, կոռուպցիայի դեմ պայքար մղելու մասին խոստումների դրժումն ու իրական ժողովրդավարական բարեփոխումներ կատարելու անկարողությունը: Քննարկմանը մասնակցեցին 40-ից ավելի հրավիրյալներ՝ ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների եւ առաքելությունների աշխատակիցներ, վերլուծաբաններ, խնդրին փորձագիտական մակարդակով տիրապետող անձինք եւ լրագրողներ:

ՌԱՀՀԿ-ը մասնակցեց Իտալիայի դեսպանատան կազմակերպած՝ «Իտալական խոհանոց» փառատոնի մեկնարկին

Ապրիլի 30-ին ՌԱՀՀԿ տնօրենը մասնակցեց ՀՀ-ում Իտալիայի դեսպանատան կազմակերպած «Իտալական խոհանոց» փառատոնի բացման արարողությանը: Էրմենեգիլդո Զեգնա խմբի հովանավորությամբ անցկացվող այս միջոցառման նպատակն էր՝ աջակցել Հայաստանում իտալական ուտեստեղեն պատրաստող մի շարք ռեստորանների: Կենտրոնը Իտալիայի եւ Հայաստանի միջեւ կապերի ամրապնդման ուղղությամբ սերտորեն համագործակցում է ՀՀ-ում Իտալիայի դեսպանատան եւ անձամբ դեսպան Բրունո Սկապինիի հետ:

ՌԱՀՀԿ-ն անցկացրեց առանց հղումների քննարկում՝ նվիրված տարածաշրջանային զարգացումներին

Ապրիլի 29-ին ՌԱՀՀԿ տնօրենը Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական անձնակազմի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացրեց առանց հղումների քննարկում՝ նվիրված Հայաստանում եւ տարածաշրջանում ներկայում ընթացող զարգացումներին: Ամսական քննարկումների շարքից այս երրորդով ՌԱՀՀԿ-ը Հայաստանում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպություններին եւ դիվանագիտական առաքելություններին տրամադրում է Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ անվտանգության հարցերի վերլուծությունների ու տեղեկատվության անկախ աղբյուր, ինչպեսեւ հավելյալ վերլուծություններ տարածաշրջանային հիմնախնդիրների եւ միտումների վերաբերյալ:

Ոչ պաշտոնական քննարկման մասնակիցների շարքում էին ՀՀ-ում Բրազիլիայի, Ֆինլանդիայի, Վրաստանի, Հնդկաստանի, Լիտվայի եւ Շվեդիայի դեսպանները, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակից եւ ՄԱԿ-ից պաշտոնյաներ, ՀՀ-ում Իտալիայի, Ռումինիայի եւ ԱՄՆ-ի դեսպանատների, Հայաստանում Եվրամիության պատվիրակության եւ Հայաստանում Եվրամիության խորհրդակցական խմբի ներկայացուցիչները: Ներկա էր նաեւ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը:



© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

ՌԱՀՀԿ-ի առաջիկա հրատարակությունները

ՌԱՀՀԿ-ի նոր զեկույցները՝ նվիրված հայաստանյան տնտեսությանը եւ քաղաքականությանը

Կենտրոնի անձնակազմը ձեռնամուխ է եղել Հայաստանի տնտեսությանը նվիրված զեկույցների նոր շարքի: Դրանցում կվերլուծվեն ՀՀ-ում սոցիալ-տնտեսական անհավասարությունը, ունեցվածքի եւ եկամտի միջեւ հետզհետե մեծացող անջրպետը, կոռուպցիան եւ կուսումնասիրվեն օլիգարխիկ գործարարության ու ձեռներեցության բնույթը, ինչպեսեւ երկրի տնտեսական գործունեությանը «ապրանքային մենաշնորհների» ու համապատասխան այլ մենաշնորհների հասցրած վնասները:

ՌԱՀՀԿ-ը նաեւ սկսել է առաջին անգամ հրատարակվելիք տարեկան ամփոփիչ գրքի պատրաստման աշխատանքները: «Հայաստանյան քաղաքականության տարեգիրք. 2010» խորագիրը կրող այս հրատարակությունը մեծապես կծառայի իբրեւ կարեւոր հիմնաղբյուր եւ ընթերցողների դատին կհանձնի ՀՀ քաղաքականության բոլոր դիտանկյուններն արծարծող հարուստ տեղեկանյութ եւ վերլուծություններ:

ՌԱՀՀԿ-ի հայտարարությունները, զեկույցները եւ հոդվածները

ՌԱՀՀԿ-ը հայտարարություն հրապարակեց Թուրքիայի եւ Հայոց ցեղասպանության վերաբերյալ

Ապրիլի 27-ին ՌԱՀՀԿ-ը հրապարակեց հայտարարություն «Թուրքիան կարող է փախչել, բայց թաքնվել, անշուշտ, չի կարող» խորագրով: Հայտարարության մեջ մասնավորապես քննադատվեց, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ճշգրտորեն եւ անկեղծորեն չարտաբերեց «Ցեղասպանություն» եզրույթը՝ փոխարենն այն անվանելով «Մեծ Եղեռն»:

Կենտրոնի վերջին հոդվածները, մենագրությունները եւ զեկույցները

Ապրիլի 1-ին *Armenia Today* լրատվական գործակալությունը հրապարակեց ՌԱՀՀԿ վարչական տնօրեն Կարապետ Կալենչյանի՝ ղարաբաղյան խաղաղ գործընթացին նվիրված ռուսերեն վերլուծությունը:

Ապրիլի 4-ին ՌԱՀՀԿ հիմնադիր Ռաֆֆի Հովհաննիսյանը հրապարակեց վերլուծություն «Հայաստանի դիրքորոշումը. արդարություն՝ տանը, արդարություն՝ աշխարհում» խորագրով: Հայերեն եւ անգլերեն այս հոդվածը լայնորեն արտատպվեց հայկական եւ միջազգային մի շարք լրատվամիջոցների կողմից:

Ապրիլի 10-ին *Armenia Today* լրատվական գործակալությունը հրապարակեց ՌԱՀՀԿ ավագ փորձագետ Մանվել Սարգսյանի՝ Ղրղզստանի վերջին հուզումների վերաբերյալ նոր դիտարկումները, իսկ ապրիլի 19-ին՝ Հայաստանի սահմանադրական քաղաքականության մասին նույն հեղինակի ռուսերեն վերլուծությունը:

Ապրիլի 29-ին Կենտրոնը հրապարակեց ՌԱՀՀԿ փորձագետ Արմինե Ղազարյանի՝ «Մեր հերոսները. քաղաքական տեխնոլոգիաներում «հերոս» համարվող կերպարի գործածումը» վերտառությամբ հայերեն մենագրությունը:



Ապրիլի 30-ին հայաստանյան մի շարք լրատվամիջոցներ, ինչպես նաեւ *Foreign Policy Journal* առցանցային հրատարակությունը զետեղեցին ՌԱՀՀԿ ավագ փորձագետ Հովսեփ Խուրշուդյանի «Դենացիֆիկացումը Թուրքիայի արդիականացման միակ ուղին է» խորագրով վերլուծությունը հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով:

ԶԼՄ-ների հետ հարաբերությունները

Ադրբեջանական լրատվական գործակալությունը հրապարակեց հարցազրույց Մանվել Սարգսյանի հետ

Ապրիլի 14-ին ՌԱՀՀԿ ավագ փորձագետ Մանվել Սարգսյանը հարցազրույց տվեց ադրբեջանական *News.az* լրատվական գործակալությանը: Ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հրապարակված այս հարցազրույցում Սարգսյանը գնահատեց Հայաստանի նախագահի եւ Թուրքիայի վարչապետի միջեւ Վաշինգտոնում տեղի ունեցած հանդիպումը:

ՌԱՀՀԿ-ն անցկացրեց մամուլի ասուլիս՝ նվիրված հայ-թուրքական դիվանագիտությանը

Ապրիլի 15-ին Կենտրոնը կազմակերպեց մամուլի ասուլիս, որի ընթացքում հայ-թուրքական դիվանագիտության ասպարեզի վերջին զարգացումների շուրջ իրենց տեսակետները ներկայացրին ՌԱՀՀԿ ավագ փորձագետ Մանվել Սարգսյանը եւ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը: ՌԱՀՀԿ-ը պարբերաբար կկազմակերպի մամուլի ասուլիսների շարք՝ նպատակ ունենալով անաչառ վերլուծություն ու տեղեկատվություն տրամադրել հայաստանյան եւ միջազգային ԶԼՄ-ներին:

ՌԱՀՀԿ տնօրենը մամուլի ասուլիս տվեց «Դե ֆակտո» ակումբում

«Դե ֆակտո» մամուլի ակումբի հրավերով Ռիչարդ Կիրակոսյանը ապրիլի 21-ին հանդես եկավ ասուլիսով, որի ընթացքում արծարծեց ներքաղաքական զարգացումներին եւ դարաբաղյան գործընթացին առնչվող մի շարք հարցեր:

Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի կապակցությամբ հարցազրույցներ տվեց Կենտրոնի անձնակազմը...

Հայկական եւ միջազգային լրատվամիջոցներով Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի լուսաբանման շրջանակներում ՌԱՀՀԿ ավագ փորձագետ Մանվել Սարգսյանը եւ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը մի շարք հարցազրույցներ տվեցին վերոնշյալ լրատվամիջոցներին՝ ի մասնավորի *al Jazeera, BBC* եւ *Reuters* լրատվական գործակալություններին:

...եւ Կենտրոնի տնօրենը՝ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված հատուկ հաղորդման համար

ԵՐԿԻՐ

Հայոց Ցեղասպանության 95-րդ տարելիցի առնչությամբ Ռիչարդ Կիրակոսյանի մեկնաբանությունները լայնորեն լուսաբանվեցին այդ թեմայի վերաբերյալ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության փաստագրական հաղորդման ընթացքում, որը հեռարձակվեց ապրիլի 24-ին եւ 25-ին:

Հավելյալ տեղեկություն մեր մասին

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը 1994թ. հիմնադրել է ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանը՝ արժանանալով հայաստանյան եւ Սփյուռքի աջակիցների լայն շրջանակների զորակցությանը: Հետեւելով համաշխարհային զարգացումներին, գիտելիքների հիմքեր խարսխելով, հանրության հետ երկխոսություն ծավալելով՝ Կենտրոնը հետխորհրդային տիրույթում հանդես է գալիս որպես երկրաքաղաքական ստեղծագործական մտածողություն ձեւավորող եւ միջազգային միջավայրի համապարփակ ընկալմանը նպաստող ուժ: Վերջին շրջանում Կենտրոնն առաջնահերթ տեղ է հատկացնում տարածաշրջանային անվտանգության ու համագործակցության, քաղաքացիական կրթության, պետության եւ ազգի համար վճռորոշ՝ ներքին ու արտաքին քաղաքականությունների կիրառական հետազոտությանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՌԱՀՀԿ՝ Երեւան, Երզնկյան 75, հեռախոս՝ (37410) 528-780 կամ 274-818, հեռապատճեն՝ (37410) 52-48-46, էլ. փոստ՝ root@acnis.am եւ info@acnis.am, կայքէջ՝ www.acnis.am:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն
Խմբագիր՝ Ռիչարդ Կիրակոսյան
Ձեւավորումը՝ Աշոտ Թուրազյանի